**ՆԱԽԱԳԻԾ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**«---» ---------- 2022թ.** **N ----Ն**

**ՈՐՈՇՈՒՄ**

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. Երևան քաղաքի Արաբկիրի թիվ 39 փողոցն անվանակոչել հետախույզ Գևորգ Վարդանյանի անվամբ՝ «Գևորգ Վարդանյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ՝** **ԱՐՄԱՆ ԱՆՏՈՆՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հետախույզներ՝ ամուսիններ Գևորգ և Գոհար Վարդանյանները, որոնք ժամանակին հայտնի էին միայն Անրի և Անիտա կեղծանուններով, իրականացրել են բազմաթիվ գործողություններ, որոնց մի մասն էլ մինչ այժմ «գաղտնի» խորագրի ներքո է: Բայց մեկն արդեն դարձել է պատմություն՝ հավերժացնելով նրանց անունները: 1943-ին Թեհրանում Անրին և Անիտան օգնեցին խափանել գերմանական հատուկ ծառայությունների մահափորձը հակահիտլերյան կոալիցիայի երկրների ղեկավարների՝ Ստալինի, Ռուզվելտի և Չերչիլի վրա: Հետագայում այս ամենի մասին նկարահանվել են նաև ֆիլմեր:

Գևորգ Անդրեյի Վարդանյանը ծնվել է 1924 թվականին փետրվարի 17-ին Դոնի Ռոստովում:

1930 թվականին Վարդանյանների ընտանիքը տեղափոխվել է Իրան, երբ Գևորգ Վարդանյանը վեց տարեկան էր: Հայրը՝ Անդրեյ Վասիլի Վարդանյանը, իրանական պաշտոնյա, ձիթհանի գործարանի տնօրեն էր, կապված էր ռուսական ներքին հետախուզության հետ և հատուկ հանձնարարությամբ է մեկնում Իրան: Հոր անմիջական ներգործությամբ որդին անցնում է հետախուզական աշխատանքի: Գևորգ Վարդանյանը 16 տարեկան պատանի էր, երբ կյանքը խորհրդային հետախուզության հետ կապեց:

1940 թվականից ղեկավարում էր հատուկ խումբը, որը զբաղվում էր Թեհրանում և այլ քաղաքներում ֆաշիստ գործակալների և գերմանացի հետախույզների բացահայտմամբ: Երկու տարում նրա խումբը բացահայտել է ավելի քան 200 մարդու, ովքեր ինչ-որ կերպ կապ են ունեցել գերմանական հետախուզության հետ:

Գևորգ Վարդանյանի հետախուզական գործունեության պատմության մեջ հատկապես նշվում է 1943 թվականը, երբ Թեհրանում կայանալիք կոնֆերանսին գործընկերների հետ պետք է ապահովեր 3 խոշոր տերությունների ղեկավարների՝ Իոսիֆ Ստալինի, Ֆրանկլին Ռուզվելտի և Ուինսթոն Չերչիլի անվտանգությունը: Հայ հետախույզին և նրա գործընկերներին հաջողվել է կանխել այդ եռյակի դեմ ֆաշիստական Գերմանիայի ծրագրած մահափորձը: Այդ իրադարձություններից տասնյակ տարիներ անց Գևորգ Վարդանյանին է հանդիպում Ուինսթոն Չերչիլի թոռնուհին և հատուկ շնորհակալություն հայտնում իր պապի կյանքը փրկելու համար:

1951 թվականին ավարտել է Երևանի պետական լեզվաբանական համալսարանի օտար լեզուների ֆակուլտետը: Երկար տարիներ աշխարհի տարբեր

երկրներում շատ բարդ իրավիճակներում բազմաթիվ հետախուզական օպերացիաներ է իրականացրել:

Գևորգ Վարդանյանի կողքին միշտ եղել է նրա կինը, համախոհն ու գործընկերը՝ Գոհար Լևոնի Վարդանյանը, ով հայրենիքին մատուցած հետախուզական ծառայությունների համար պարգևատրվել է Կարմիր դրոշի շքանշանով:

Գոհար Լևոնի Վարդանյանը ծնվել է 1926 թվականի հունվարի 25-ին Լենինականում:

1930 թվականին նա ընտանիքով տեղափոխվել է Իրան: 16 տարեկան հասակում անդամագրվել է իր ապագա ամուսին և զինակից Գևորգ Վարդանյանի խմբին, որի հետ միասին կատարել է բազմաթիվ հետախուզական աշխատանքներ:

1946 թվականին Գոհարն ամուսնացել է Գևորգ Վարդանյանի հետ: Հարսանիքի արարողությունը տեղի է ունեցել Թեհրանի հայկական եկեղեցում և եղել է զույգերի երեք ամուսնություններից առաջինը: Ելնելով իրենց աշխատանքի բնույթից՝ նրանք ամուսնացել են երեք անգամ, սակայն երեխաներ չեն ունեցել:

1951 թվականին Վարդանյանների խնդրանքով գաղտնի խմբակցության կենտրոնը նրանց հնարավորություն է տալիս ստանալու բարձրագույն կրթություն և նույն թվականին նրանք վերադառնում են ԽՍՀՄ:

1956 թվականին Վարդանյաններն ավարտել են Երևանի օտար լեզուների ինստիտուտը, որից հետո «Անրի» և «Անիտա» օպերատիվ կեղծանուններով ընդհատակյա վիճակում աշխատել են տարբեր երկրներում:

Իտալիայում աշխատելու տարիներին հսկողության տակ են վերցրել ՆԱՏՕ-ի հարավային թևը: Այստեղ նրանք ծանոթություններ են հաստատել նախարարների, նախագահի և ամերիկյան ծովային սպաների հետ:

1986 թվականին նրանք վերադարձել են Հայաստան: Մի քանի ամիս անց Գոհարն անցել է թոշակի, իսկ Գևորգը շարունակել է ծառայությունը մինչև 1992 թվականը:

Նույնիսկ թոշակի անցնելուց հետո Գևորգ Վարդանյանը ակտիվորեն համագործակցել է արտաքին հետախուզության ծառայության հետ, հանդիպել է երիտասարդ գործընկերներին և նրանց է փոխանցել իր հարուստ կենսափորձը:

2013 թվականին Գոհար Վարդանյանը պարգևատրվել է նաև ՀՀ ՊՆ «Գևորգ Վարդանյան» գերատեսչական մեդալով, իսկ 2019 թվականի դեկտեմբերի 13-ին հետմահու պարգևատրվել է Պատվո շքանշանով:

Հայ հետախույզ Գևորգ Վարդանյանը արժանացել է ԽՍՀՄ հերոսի կոչման, պարգևատրվել է Լենինի, Կարմիր դրոշի, Մեծ Հայրենականի 2-րդ աստիճանի շքանշաններով և բազմաթիվ մեդալներով:

Մոսկվայի Տրոեկուրովսկի գերեզմանատանը Գևորգ Վարդանյանին կանգնեցվել է հուշարձան, որի հեղինակն է Անդրեյ Կովալչուկը, իսկ Երևանի Թումանյան 42 հասցեում տեղադրվել է իր հուշատախտակը:

Հ.Գ. Ի սկզբանե սույն նախագիծը Երևան քաղաքում հետախույզներ Գևորգ և Գոհար Վարդանյանների անվամբ փողոց անվանակոչելու մասին էր, սակայն «Աշխարհագրական անվանումների մասին» ՀՀ օրենքի Հոդված 4-ի 3-րդ կետի համաձայն առկա է ժամանակավոր սահմանափակում տիկնոջ՝ Գոհար Վարդանյանի անվամբ փողոցի անվանակոչության, ուստի փողոցն առաջարկվում է անվանակոչել Գևորգ Վարդանյանի անվամբ՝ հույսով, որ հետագայում՝ 2024 թվականին այն կանվանափոխվի «Գևորգ և Գոհար Վարդանյանների անվամբ»:

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ՝** **ԱՐՄԱՆ ԱՆՏՈՆՅԱՆ**

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Երևան քաղաքում Գևորգ Վարդանյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևան քաղաքում Գևորգ Վարդանյանի անվամբ փողոց անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ՝** **ԱՐՄԱՆ ԱՆՏՈՆՅԱՆ**